ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

<u>ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</u>

ՀԱՄԱՆՄԱՆ ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Համանման բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19, 17.02.2022թ.

Բողոք բերող անձ՝ «Գևորգյան և Ներսիսյան» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12»

Գնման առարկան՝ ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերում

Բողոքի պահանջը՝ պարտավորեցնել դադարեցնել թիվ «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12» ծածկագրով գնման ընթացակարգի 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետի որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ռ. ՄԿՐՏՉՅԱՆ

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ

որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Մելիք Ադամյան 1,

ՀՀ ֆինանսների նախարարություն

Բողոք բերող՝ <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Նուբարաշեն 11փ., 21-26

Հեռ.՝ 094-27-77-93

Էլ.փոստ՝ gevorgyan.nersisyan@mail.ru

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Հասցեն՝ ՀՀ, ք.Երևան, Հանրապետության հրապարակ ,

Կառավարական տուն 3, 4-րդ հարկ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների

ձեռքբերման նպատակով հայտարարված

<< ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-21/12>> ծածկագրով բաց մրցույթ

ԲՈՂՈՔ

/համանման բողոք՝ ԳԲՔԱ-ԼՕ-2022/19/

ՀՀԲԿ-ԲՄԱՇՁԲ-21/12 ծածկագրով գնման ընթացակարգի հանձնաժողովի 04.02.2022թ. թիվ 2-4 արձանագրությամբ <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի հայտի մերժումը վերացնելու պահանջի վերաբերյալ:

- Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք,այն է՝

1) Պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների,աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.
2) Գնումների և գնումների գործընթացի տնտեսող,արդյունավետ և օգտավետ իրականացում:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար,անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ,կամակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից ,գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ , անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, **ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:**

<u>Մրցույթի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստերը.</u>

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կարիքների համար ՀՀ Լոռու մարզի Տաշիրի բժշկական կենտրոնի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով հայտարարվել է

<<ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/12>> ծածկագրով բաց մրցույթ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/, որին մասնակցել է <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ն:

Հայտերի բացումից հետո /www.armeps.am/ հանձնաժողովի կողմից 31.01.2022թ.-ին կազմվել է արձանագրություն N2-2, որի համաձայն 1 աշխատանքային օրվա ընթացքում մասնակիցներից պահանջվել է շտկում, որն էլ պահանաջված ժամկետում ներկայացվել է մեր կողմից:

<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ին արձանագրվել է շտկել հավելված 1.2 /սարքավորումներ/ , մասնավորապես տող 1,18-103,109 և 126, որն էլ պահանջված կարգով և ժամկետում արվել է:

Այնուհետև 04.02.2022թ.-ին կազմվել է արձանագրություն N2-4, ըստ որի բոլոր մասնակիցների շտկման մեջ ի հայտ են եկել թերություններ, մասնավորապես՝ *<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի կողմից հավելված 1.2-ի մասով չշտկված են համարվել ներքոնշյալ հիմնավորումներով՝*

ա) 52-54,68-69,71,78-79,81,95-103 տողերում ներկայացված մոդելը և արտադրողը իրար չեն համապատասխանում(ներկայացված արտադրողը նման մոդելային շարք չունի),

բ)27,31,42,45,47,63-64,76,88 տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջերին:

Արձանագրության 1.3 –րդ կետի համաձայն՝ <<Գնահատող հանձնաժողովը>> որոշեց՝

Կարգի 42-րդ կետի պահանջների հիման վրա <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ –ի հայտը մերժել:

Գնահատող հանձնաժողովի արձանագրությունը <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ –ի հայտը մերժելու մասով անհիմն է և ենթակա է վերացման, քանի որ գնահատող հանձնաժողովի 31.02.2022թ.-ին կազմված թիվ 2-2 արձանագրության 1.2 կետով արձանագրված անհամապատասխանությունները <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ –ի կողմից սահմանված ժամկետում շտկվել են, սակայն հանձնաժողովի համար շտկումները համարվել են թերի:

Հարկ է նշել,որ մեր կողմից կատարվել են բոլոր անհարժեշտ շտկումները, մասնավորապես՝ արձանագրության մեջ մեզ վերաբերվող <<ա>> ենթակետում նշված այն պնդումը, որ տողերում ներկայացված մոդելը և արտադրողը իրար չեն համապատասխանում (ներկայացված արտադրողը նման մոդելային շարք չունի), իրականությանը չի համապատասխանում, իսկ <<բ>> ենթակետում նշված պնդումը, այն է՝ տողերում ներկայացված մոդելները տեխնիկական բնութագրերով չեն համապատասխանում հրավերի պահանջերին, ևս չի համապատասխանում իրականությանը, որոնց ապացույցները հարկ եղած դեպքում կարող ենք ներկայացնել հանձնաժողովի դիտարկմանը:

Ի հավելումն այս ամենի հարկ ենք համարում նշել,որ <<ա>> և <<բ>> ենթակետերով նշված տողերի նյութերի արժեքը մրցույթով նախատեսված ընդհանուր շինաշխատանքների 0.1%-ը անգամ չի կազմում, և վերը շարադրված հանգամանքները ևս հաշվի առնելով համարում ենք, որ գնահատող հանձնաժողովի 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրությունը <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ –ի հայտը մերժելու մասով անհիմն է՝ ընդունվել է օրենքի խախտմամբ և ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով <<Գնումների մասին >> ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով՝ բողոք քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

Պարտավորեցնել գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին՝ դադարեցնելու 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրության 1.2 կետով կայացրած որոշումը՝ <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ –ի հայտը մերժելու վերաբերյալ:

Կից ներկայացվող փաստաթղթեր.

1. <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ –ի վերաբերյալ պետռեգիստրից քաղվածք,
2. <<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ –ի տնօրեն Ե. Գևորգյանի անձնագրի պատճեն,
3. Պետական տուրքի վճարման պատճեն,
4. 04.02.2022թ.-ի թիվ 2-4 արձանագրության պատճեն:

<<Գևորգյան և Ներսիսյան>> ՍՊԸ-ի

տնօրեն՝ *Ե. Գևորգյան*

17.02.2022թ.